ԾԱՏՈՒՐ ԱՂԱՅԱՆ

1982 թ. դեկտեմբերի 3-ին կյանքի 71-րդ տարում հանկարծամահ եղավ սովետահայ անվանի պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Ծատուր Պավելի Աղայանը։

Ծ. Պ. Աղայանը ծնվել է 1911 թ. դեկտեմբերի 30-ին ներկայիս Ադրբեջանական ՍՍՀ Դաշքեսանի շրջանի Փիփ (Զագլիկ) գյուղում, երկրագործի ընտանիքում։ 1917 թ. Աղայանների ընտանիքը տեղափոխվում է Շամխորի շրջանի Գոլիցինո (այժմ Մարտունի) գյուղը և այնտեղ մշտական բնակություն հաստատում։

1930 թ. ավարտելով Գյանջայի (այժմ Կիրովաբադ) մանկավարժական տեխնիկումը, Աղայանը անցնում է մանկավարժական աշխատանքի Շամխորի շրջանի Մարտունի, Ջաղիր և Զարդախլու գյուղերի դպրոցներում որպես ուսուցիչ և ուսմասվար։

1933 թ. Ծ. Պ. Աղայանը ընդունվում է Մոսկվայի պատմափիլիսոփայական-գրական ինստիտուտը և 1937 թ. ավարտում նրա պատմության ֆակուլտետը։ Միաժամանակ էքստերն կարգով ավարտում է նաև Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը։ Այնուհետև կրկին անցնում է մանկավարժական աշխատանքի Լեռնային Ղարաբաղում և Բաքվում՝ որպես միջնակարգ դպրոցների պատմության ուսուցիչ, ուսմասվար, շրջանային լուսբաժնի տեսուչ և ապա մարզային լուսբաժնի մեթոդաբինետի վարիչ։

1938 թ. Աղայանը ընդունվում է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան՝ ՍՍՀՄ ժողովուրդների պատմության մասնագիտության գծով։ 1941 թ. հունիսին հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական դիսերտացիան, ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և անցնում գիտամանկավարժական աշխատանքի Բաքվում։ Այստեղ նա վարում է Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի պրոռեկտորի պաշտոնը, դասախոսություններ կարդում նույն ինստիտուտի և Ադրբեջանի Կիրովի անվան պետական համալսարանում։ Միաժամանակ գիտահետազոտական աշխատանք է կատարում Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ զբաղեցնելով ավագ գիտաշխատողի և գիտական քարտուղարի պաշտոնները։

1948 թ. հունվարին Աղայանը Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում հաջողությամբ պաշտպանեց «1870 թ. գյուղացիական ռեֆորմը Ադրբեջանում» թեմայով դոկտորական դիսերտացիան և ստացավ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ երկու տարի հետո՝ նաև պրոֆեսորի կոչում։

1948 թ. Աղայանը Բաքվից տեղափոխվում է Երևան։ Այստեղ նա նշանակվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի սովետական հասարակարգի պատմության բաժնի վարիչ։ Միաժամանակ աշխատում է Երևանի պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում։ 1950 թ. ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ և նշանակվում ՍՄԿԿ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտորի գիտա-

կան գծով տեղակալ։ 1950—1954 թթ. Աղայանը եղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի գիտության և կուլտուրայի բաժնի վարիչ։ 1954—1961 թթ. ղեկավարել է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժինը։ 1961—1968 թթ. վարել է ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտորի պաշտոնը։ 1968 թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս և ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար։ 1979 թ. մինչև իր կյանքի վերջը գլխավորել է Երևանի պետական համալսարանի կուսակցության պատմության ամբիոնը։

Աղայանի գրչին են պատկանում բազմաթիվ աշխատություններ, որոնք ընդգրկում են հայ ժողովրդի պատմության XIX և XX դդ. կարևոր պրոբլեմները, ինչպես նաև Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամության պատմության, այդ ժողովուրդների անցյալի ականավոր դեմքերի գործունեության, պատմության հանգուցային շրջանների ու դեպքերի, իրադարձությունների գիտական լուսաբանումը։

Ծ. Պ. Աղայանը զգալի դեր է կատարել հայ ժողովրդի պատմության կարևորագույն շրջաններին նվիրված փաստաթղթերի ժողովածուներ կազմելու և դպրոցական դասագրքեր գրելու գործում։ Խմբագրել է բազմաթիվ գրքեր, ժողովածուներ և ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիրը»։

Աղայանը զգալի ավանդ ունի երիտասարդ գիտական կադրերի պատրաստման ասպարեզում։ Նրա ղեկավարությամբ թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել 50-ից ավելի ասպիրանտներ, որոնցից 10-ը պաշտպանել են նաև դոկտորական դիսերտացիաներ։

Ծ. Պ. Աղայանը խոշոր ծառայություն ունի սովետական պատմագիտության նվաճումների բանավոր պրոպագանդման, նրա մարքսիստական սկզբունքների պաշտպանման ասպարեզում։ Նա բազմիցս հանդես է եկել զեկուցումներով ու ելույթներով պատմագիտության տարբեր հարցերի շուրջ։

Աղայանը հասարակական ակտիվ գործիչ էր։ Բազմակողմանի դիտական աշխատանքը նա հաջողությամբ զուգորդում էր կուսակցական, հասարակական պարտականությունների ու հանձնարարությունների հետ։ Նա 1950—1954 թթ. եղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամության թեկնածու, 1963—1971 թթ.՝ Կենտկոմի անդամ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, 1971—1981 թթ.՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի վերստուգիչ հանձնաժողովի անդամ։ Նա գործուն մասնակցություն ուներ «Գիտելիք» ընկերության աշխատանքին, հաճախակի դասախոսություններ ու զեկուցումներ էր կարդում հանրապետության աշխատավորների ու մտավորականների համար։

Ծ. Պ. Աղայանի բազմակողմանի ու արդյունավետ աշխատանքը բարձր է գնահատվել մեր կուսակցության և կառավարության կողմից։ Նա պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» և «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով ու պատվոգրերով։

Ն. Ա. ԹԱՎԱՔԱԼՅԱՆ